Արմինե Շահբազյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
shahbazyan9494@gmail.com

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ*

Հիմնաբառեր. Կինո, Համո Բեկնազարյան, «Դավիթ Բեկ», Էդմոնդ Քեոսայան, «Հայֆիլմ», «Մոսֆիլմ», «Հուսո աստղ»:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմությունը լի է ազատության համար մղած պայքարի հիանալի դրվագներով: Այդպիսի մի պայքար ընթացավ Դավիթ Բեկի գլխավորությամբ Սյունիքում 18-րդ դարի 20-ական թվականներին: Սյունիքում Դավիթ Բեկին հաջողվեց միավորել մասնատված ուժերը մեկ բանակի մեջ և իրար ետևից հաղթական մարտեր մղել թշնամու դեմ (Հայրյան 1979, 143–144): Զորավար Դավիթ Բեկը մարմնավորում էր հայ ժողովրդի բոլոր լավագույն ձգտումները և «Խիզախ մարտահրավեր նետեց օտարերկրյա նվաճողներին և ամբողջ կյանքի ընթացքում անհողդողդ պայքարեց հանուն իր ժողովրդի ազատության ու երջանկության» (Բեկնազարյան 1968, 267): Նրա գլխավորած ազատագրական պայքարը ունեցավ պատմական կարևոր նշանակություն և հետագայում իր արձագանքը գտավ հայ մշակույթում: Այս հոդվածում կանդրադառնանք Դավիթ Բեկի գլխավորած Սյունիքի ազատագրական պայքարի պատմությանը նվիրված երկու հայկական ֆիլմերին, որոնք չնայած ժամանակաշրջանի հարուցած դժվարություններին, կյանքի են կոչվել և լայն արձագանք գտել հանրության կողմից:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին «Հայֆիլմ» կինոստուդիայում նշանավոր կինոռեժիսոր Համո Բեկնազարյանի[1] կողմից ստեղծվեց (1944 թ.) «Դավիթ Բեկ» պատմահայրենասիրական բովանդակությամբ մեծածավալ ֆիլմը, որը նրա մեծագույն ավանդն է կինոյի ասպարեզում (Քալանթար 1986, 237):

«Դեռևս պատերազմից առաջ Բեկնազարյանը պատրաստվել էր բեմադրել Տիգրան Մեծի, ապա Վարդան Մամիկոնյանի մասին պատմական մեծածավալ ֆիլմեր, սակայն այդ դարաշրջանից չէին պահպանվել նյութական իրականության հետքեր, կինոստուդիան չուներ անհրաժեշտ ռեսուրսներ, և ռեժիսորի այս մտահղացումները չեն իրականանում: Ինչ վերաբերում է հայոց պատմության փառա-

* Ստացվել է 06.08.2022 թ., ուղարկվել է գրախոսման 23.09.2022 թ., ընդունվել է տպագրության 18.11.2022 թ.:

1 Համո Բեկնազարյանը (1891/1892–1965): Նշանավոր կինոռեժիսոր, ՀՍԽՀ ժողովրդական արտիստ (1935): Հանդիսանում է «Հայֆիլմ» կինոստուդիայի հիմնադիրներից: 1966 թ. «Հայֆիլմ» կինոստուդիան անվանվել է նրա անունով:

պանծ ազգային հերոսներից մեկի՝ խոշորագույն ռազմական գործիչ Դավիթ Բեկի դարաշրջանին, ապա այդ ժամանակներն անհամեմատ մոտ էին «պատմական բնապատկերի» էկրանային վերարտադրման առումով, ինչը և Բեկնազարյանը հաշվի առնելով ձեռնամուխ եղավ ֆիլմի ստեղծմանը» (Սյունյաց երկիր 2022, 33):

«Դավիթ Բեկ» ֆիլմը գեղարվեստական խաղարկային կինոնկար էր, որտեղ ներկայացվում էր Սյունիքում հայերի ազգային-ազատագրական պայքարը պարսիկ նվաճողների դեմ՝ ազգային հերոս Դավիթ Բեկի գլխավորությամբ: Վերջինիս կերպարը իր մեջ ներառում էր երկու անհատականություն: Նա չուներ անձնական կյանք և հմուտ ռազմական-քաղաքական գործիչ լինելով, ճիշտ ժամանակին հայտնվելով ճիշտ տեղում՝ հայ ժողովրդին փրկեց օտարի լծից (Դավթյան 2020):

Ֆիլմի տևողությունը 90 րոպե է: Դերերում հանդես են եկել Հրաչյա Ներսիսյանը (Դավիթ Բեկ), Դավիթ Մալյանը (Ստեփանոս Շահումյան), Ավետ Ավետիսյանը (Մելիք Ֆրանգյուլ), Լևոն Ջոհրաբյանը (Բայանդուր), Վաղինակ Մարգունին[2] (Ասլամազ-Ղուլի խան), Վլադիմիր Երշովը (Պետրոս I), Տատյանա Մախմուրյանը (Գայանե), Ֆրունզե Դովլաթյանը (Մելիք Մանսուր) և այլք:

Հ. Բեկնազարյանը փորձել էր ֆիլմում հերոսի, հայրենիքի և ժողովրդի կերպարը միաձույլ ներկայացնել, ինչը դիտելի էր Դավիթ Բեկին պատկերող առաջին կադրերից: Նրան ներկայացնելուց առաջ ցուցադրվել է հայրենի երկնքի կադրը, որը Դավիթ Բեկը հասուն տարիքում տեսնելու էր առաջին անգամ: Լեռնային արահետով անցնում էին երեք հեծյալ, որոնցից մեկը գլխավոր հերոսն էր: Նրա շուրթերից հնչում էր հետևյալ խոսքերը. «Ինչ գեղեցիկ ես, հայրենիք իմ»: Հայրենիքի գեղեցկության կողքին նրա աչքի առաջ երևում էին այրվող գյուղը, ավերված տաճարը, և սա դարձել էր Դավիթ Բեկի երդման պատճառը, որ ամեն գնով պետք է ազատի հայրենիքը (Քալանթար 1986, 239): Ցասումով լցված Դավիթ Բեկն ասել է. «Ես երդվում եմ քեզ, հայրենի՛ք…, որ գյուղացու տնակում մարած կրակը նորից կվառվի, հողագործի գութանը նորից կվարի հողը, հայ աղջկա անարգված պատվի վրեժը կլուծվի: Երդվում եմ, որ այս հողը կամ կազատագրվի, կամ կընդունի իմ դիակը» և թե ինչպես Դավիթ Բեկը կատարեց իր երդումը, պատմում է ֆիլմը (Բեկնազարյան 1968, 268): Ֆիլմում ցույց է տրվում ժողովրդի՝ Դավիթ Բեկին ընդառաջ գնալու տեսարանը. այս կերպ ռեժիսորը ցույց էր տվել, որ ժողովրդի ցանկությունը ևս ազատագրվելն է՝ իր առաջնորդի գլխավորությամբ. «Դավիթ Բեկը ժողովրդին մարմնավորող, նրանց միտքը, խիղճը, կամքը և հույսերը արտահայտողն էր» (Քալանթար 1986, 240–241): Իրադարձությունների նկարագիրը սկսվում է Պետրոս Առաջինի պալատից, երբ հայոց դեսպանները Իսրայել Օրու գլխավորությամբ այնտեղ էին հավաքված և դեսպանների մեջ էր իշխան Ստեփանոս Շահումյանը: Ֆիլմի ավարտին հնչում է Դավիթ Բեկի մարգարեական խոսքերը՝ ուղղված հետագա սերունդներին. «Այսպես ենք պայքարել մենք, ձեր նախնիները 18-րդ դարի սկզբում: Այսպես կպայքարեն Հայաստանի պանծալի զավակները ընդմիշտ դարերով» (Սարյան 1944, 109):

2 Վաղինակ Մարգունին միակ դերասանն էր, ով խաղացել է Դավիթ Բեկին նվիրված երկու ֆիլմերում (1944 և 1978 թթ.):

Հ. Բեկնազարյանի թողած հուշերը մեզ օգնում են ավելի լավ պատկերացում կազմել ֆիլմի ստեղծման մասին, և իմանալ հետաքրքրիր տեղեկություններ նկարահանման վերաբերյալ: Համո Բեկնազարյանը պատմել է, որ պատմական ֆիլմ բեմադրելը կապված է եղել մեծ դժվարությունների հետ և որպեսզի կարողանար աշխատանքը իրականացնել, սկսել է սովորել և տիրապետել «պատմական մատերիալիզմի հիմունքներին» և մշակել է մի քանի դրույթներ, ինչը հարկավոր էր պատմական ժանրի ասպարեզում աշխատող յուրաքանչյուր արվեստագետի, դրանք են. «1. պատմական սխեմաները չպետք է փոխարինեն պատմական իրական փաստերի կոնկրետ շարադրանքին, 2. անհրաժեշտ է հիմնական ուշադրություն դարձնել կարևորագույն ու բնորոշ իրադարձություններին, պատմական խոշորագույն գործիչներին, 3. պատմական իրադարձությունները պետք է տրվեն իրենց զարգացման պրոցեսում, առաջադիմական դասակարգերի, առաջադիմական ուժերի ու հետադիմական ուժերի միջև տեղի ունեցած պայքարի պրոցեսում, 4. գեղարվեստական պատմական երկի հեղինակը պետք է անցյալը վերարտադրի ստեղծագործաբար՝ զուգակցելով իրականում տեղի ունեցած իրադարձություններն ու հորինված իրադարձությունները, իրականում ապրած մարդկանց և մտացածին մարդկանց, 5. պատմական թեմատիկան արվեստագետին չի ազատում իր մտահղացումը կոնկրետ, ավարտուն գեղարվեստական ձևի մեջ բացահայտելու անհրաժեշտությունից» (Բեկնազարյան 1968, 268):

Պատերազմի տարիներին, երբ թշնամին գտնվել է Կովկասյան լեռնաշղթայի մատույցներում և պատրաստվել է ռազմական գործողություններ սկսել, շատ դժվար է եղել ստեղծել այնպիսի աշխատանք, երբ ստուդիայի տղամարդկանց գրեթե մեծ մասը մեկնել էր ռազմաճակատ, և ոչ քաղաքում, ոչ գյուղում հնարավոր չի եղել տղամարդկանց մասսայական տեսարաններ ստեղծել: Դժվար էր նաև զգեստների ու ռեկվիզիտի[3] համար անհրաժեշտ նյութեր գտնելը: Առկա դժվարությունների հետ մեկտեղ ցանկությունը մեծ էր ստեղծել հայրենասիրական ֆիլմ (Բեկնազարյան 1968, 269):

Բեկնազարյանը պատմել է, որ սցենարի վրա աշխատել են մեծ հեղինակային կազմով՝ եղել է ինքը, Ս. Հարությունյանը, ով գրել է սցենարի առաջին տարբերակը, դրամատուրգ Վ. Սոլովյովը և Յա. Դուկորը: «Ստուդիայում հաճախ էր պատահում, որ ինձ մոտ էին գալիս վաղուց ծանոթ աշխատողներ և ասում. Դե, մնաս բարով, Համո Իվանովիչ… Ծանուցագիր եմ ստացել… Արդյոք կտեսնվենք էլի... Այո, շատերին այդպես էլ չտեսա…»: Գրական սցենարի վրա աշխատելուց հետո, Բեկնազարյանը այն տարել է Մոսկվա՝ վերջնական հաստատման: Երևանի հասարակությունը անհամբեր սպասում էր ֆիլմի վերջնական հաստատմանը և բեմադրությանը: Ֆիլմի ստեղծագործական խումբը կապվել էր արվեստի շատ ներկայացուցիչների հետ և հատկապես գտնվել են Ավետիք Իսահակյանի և Հովսեփ Օրբելու ուշադրության կենտրոնում (Բեկնազարյան 1968, 270):

Պատմական ֆիլմ ստեղծելու համար պետք էր ունենալ որևէ լավ պատմաբանի աջակցություն: Համո Բեկնազարյանը իր թիմով դիմել է ակադեմիկոս Հ. Օրբե-

3 Ներկայացման ընթացքում դերասաններին անհրաժեշտ իրերի և բեմադրման առարկաների ամբողջություն:

լուն և չնայած նրան, որ չէր սիրում ոչ այնքան կինոն, որքան կինոաշխատողներին, աշխատանքում հսկայական օգնություն է ցույց տվել: Նա խիստ մարդ էր, բայց և անակնկալ սիրալիր: Նա մեծ նվիրումով և եռանդով էր մոտենում աշխատանքին: Հ. Օրբելու օգնությամբ նկարիչները՝ Միքայել Արուտչյանի գլխավորությամբ, կարողացան վերականգնել այդ դարաշրջանի զգեստները, համապատասխանորեն զինել Դավիթ Բեկի մարտիկներին (Բեկնազարյան 1968, 272–273):

Ինչ վերաբերում է Ավ. Իսահակյանին, ապա նա եղավ այն մարդը, ով ստեղծված իրավիճակում կանգնեց ֆիլմի հեղինակների կողքին: Անհասկանալի պատճառներով, հենց նկարահանումների սկզբին բռնկվել է հրդեհ: Միակ ատելիեի տանիքն այրվել է: Հուզված ստուդիա եկած Ավ. Իսահակյանը այնպես է քաջալերել բոլորին, որ աշխատող թիմը համակվել է համոզմունքով, որ ֆիլմը կնկարահանվի՝ անգամ առանց ատելիեի: Մինչև կպատրաստվեր նոր տանիքը, տաղավարային նկարահանումները կատարվել էին քաղաքի ամենատարբեր մասերում, հատկապես՝ մի հին մզկիթի գմբեթի տակ (Բեկնազարյան 1968, 271): Բոլորն իրենց աշխատանքը կատարում էին այնպիսի անձնազոհությամբ, որ թվում էր, թե որևէ խոչընդոտ չկա, որ չկարողանային հաղթահարել: Դժվար է եղել մասսայական տեսարաններ կազմակերպելը, ձիավորներ գտնելը, այն էլ այն ժամանակ, երբ ֆիլմում կային կռվի տեսարաններ՝ հեծյալ զորքի մասշտաբային գրոհներով: Զգեստների համար կտոր չկար, մինչդեռ հայ մելիքներն ու պարսից խաները հագած են եղել շքեղ հագուստներ: Դեկորներ կառուցելու համար անտառանյութ չկար, զենք պատրաստելու համար՝ նյութեր, բայց նկարահանվել էր հայ կինեմատոգրաֆի ամբողջ պատմության ընթացքում ամենաընդարձակ ինտերիերով, զինված մարտիկների հսկայական խմբերով, մեծ մասշտաբների ժողովրդական տեսարաններով ֆիլմը, և հենց այս առիթով Հ. Բեկնազարյանն ասել է. «Իմ բեմադրած ֆիլմերի մեջ «Դավիթ Բեկն» ամենասիրելիներից է, և ինձ համար դժվար է այն օբյեկտիվորեն գնահատելը» (Բեկնազարյան 1968, 273–274):

Ոչ միայն կատարողական, այլև գեղանկարչական բարձր մակարդակի վրա էր գտնվում դերասանների խաղը: Հր. Ներսիսյանը ստեղծել էր ժողովրդական առաջնորդի խիզախ, ազնիվ, իմաստուն կերպար: Նա Դավիթ Բեկին պատկերել էր որպես հեռատես ու խելացի գործչի, հայրենասերի, ռազմական գործին տիրապետող զինվորականի և քաղաքագետի: Դավաճան մելիք Ֆրանգյուլի կերպարը կերտել էր Ավետ Ավետիսյանը: Դերասանը իսկական վարպետությամբ էր բացահայտում Ֆրանգյուլի դավաճան էությունը: Դավիթ Մալյանը կերտել էր իսկական հայրենասերի՝ Դավիթ Բեկի հավատարիմ զինակցի կերպարը: Նա մարտում տաքարյուն էր, իսկ լիրիկական դրվագներում՝ մեղմ (Բեկնազարյան 1968, 275):

Ֆիլմում պատմական բնանկար ստեղծելու մեջ առանձնահատուկ դեր ուներ օպերատոր Գարուշ Բեկնազարյանը[4], կադրը ստեղծելու և պատմական մասշտաբայնության հասնելու նրա արտակարգ կարողության մասին վկայում էր ֆիլմը: Նա կարողացել էր ցույց տալ ժամանակաշրջանի կոլորիտը: Տաղավարները նկարահանել էր օպերատոր Դ. Ֆելդմանը: Հերոսներին խոշոր պլանով և արտահայ-

4 Կինոօպերատոր Գարուշ Բեկնազարյանը կինոռեժիսոր Համո Բեկնազարյանի կրտսեր եղբայրն է:

տիչ ռակուրսով պատկերելու նրա մաներան (ծերունի տարեգրի, գիշերը տաճարում գտնված ժամանակ Դավիթ Բեկի, ճախարակ մանող դայակի կերպարները), ճաշակով ընտրված աքսեսուարների հմուտ լուսավորումը ֆիլմին «ակադեմիական խստություն» հաղորդեցին: Հ. Բեկնազարյանը նկարահանել էր ֆիլմի ամբողջ մետրաժի կեսից ավելին՝ ներառյալ բոլոր գիշերային տեսարանները՝ հարձակումը պարսկական ջոկատի վրա, Ձևու ամրոցի գրոհումը, բերդի դարպասների մոտ տեղի ունեցած տեսարանը և այլն: Այդ բոլոր նկարահանումները կատարվել են հայրենական արտադրության ժապավենի վրա, դժվար պայմաններում, էլեկտրաէներգիայի և լուսավորող սարքավորումների բացակայությամբ (Բեկնազարյան 1968, 274): Ֆիլմում հնչող երաժշտության հեղինակը կոմպոզիտոր՝ Աշոտ Սաթյանն (Միկոյան 1958, 156) էր, ով կինեմատոգրաֆում սկսել էր աշխատել դեռևս 1938 թվականին: «Դավիթ Բեկի» երաժշտությունը նրա ստեղծագործական ամենամեծ հաջողությունն էր: Հատկապես դժվար էր խմբի տնօրեն Օհանջանյանի աշխատանքը: Պատերազմի տարիներին, չնայած եղած դժվարություններին, նրանք կազմակերպել են հսկայական դեկորների կառուցումը, պատմական զգեստներ կարել, ստեղծեցին զենքի պատրաստման արտադրամաս, նկարահանումներում ներգրավեցին հեծյալ միլիցիան, զինվորական մասեր (Բեկնազարյան 1968, 276):

«Դավիթ Բեկ» ֆիլմը բարձր գնահատականի է արժանացել և՛ հանդիսատեսի կողմից, և՛ մամուլում: «Սովետական կինեմատոգրաֆիայի ականավոր վարպետ, ժողովրդական արտիստ՝ Համո Բեկնազարյանին կատարելապես հաջողվել էր ստեղծել մի ֆիլմ, որն իր հայրենասիրության բարձր իդեականությամբ, գեղարվեստական հագեցվածությամբ ու ներքին դինամիկայով հավասարվել էր Խորհրդային Միության նույնանման ժանրի ֆիլմերին» (Սարյան 1944, 109): «Մեր առջև գաղափարական և գեղարվեստական մեծ արժեք ունեցող հայրենասիրական հուզիչ ստեղծագործություն է», — գրված է «Պրավդայում»: Թերթը մասնավորապես ընդգծում էր նկարի «ազգային հմայիչ կոլորիտը», այն, որ Բեկնազարյանը ֆիլմը «կառուցել է իբրև ռոմանտիկորեն վեհաշունչ, փառահեղ էպիկական ստեղծագործություն» (Քալանթար 1986, 255): Հատկապես հանդիսատեսին գրավել էր ֆիլմում եղած ռազմի տեսարանները (Ռիզան 1958, 127):

Ֆիլմը խորապես հուզել էր Ավ. Իսահակյանին: Նա իր տպավորությունների մասին գրել էր «Սովետական Հայաստան» թերթում: «...Անմոռանալի տեսարաններ են մելիքների ժողովը Տաթևի հինավուրց վանքում, զինվորների երդումը, հայ կանանց նվիրաբաշխումները, Դավիթ Բեկը մենակ, իր խղճի հետ: Մի վեհ տեսարան, ուր հայ ժողովուրդը իր հերոս առաջնորդի հետ, վսեմացած իր հոգեբուխ երաժշտության պես, բախտորոշ ճակատամարտից ժամեր առաջ, ուխտում է զոհ բերել իր կյանքը հայրենիքի փրկության գործին» (Քալանթար 1986, 255–256): Բարձր գնահատանքի է արժանացել նաև դերասանական կատարումը, օպերատորական աշխատանքը, կոմպոզիտորի, նկարիչների ավանդը: «Ասես քարից է քանդակված այդ մոնումենտալ կերպարը», — իր հիացումն է արտահայտել «Մոսկովսկի բոլշևիկ» թերթի գրախոսը՝ նկատի ունենալով Հրաչյա Ներսիսյանի կատարումը Դավիթ Բեկի դերում: Մ. Ճիաուրելին ֆիլմին նվիրված իր հոդվածում ընդգծել էր. «Տաղանդավոր կինոնկարիչ Մ. Արուտչյանը, օպերատորներ Դ. Ֆելդմանն ու Գարուշ Բեկնազարյանը հասել են կինոպատկերման լուսաստվերային

բարձր որակի»: «Կոմպոզիտոր Ա.Սաթյանի երաժշտության մեջ գերակշռող ժողովրդական մոտիվները հիանալիորեն ներդաշնակում են ֆիլմի թեմային», — ասվում էր քննախոսություններից մեկում (Քալանթար 1986, 256–257):

Չնայած ֆիլմի ունեցած մեծ հաջողությանը՝ կա նաև այն կարծիքը, որ այն ստացվել էր ավելի վատ, քան սցենարական մտահղացումն էր: Նաև ասվում էր, որ ֆիլմում շատ բաներ թատերային էին, կինոյի համար անբնական և հակասող կինեմատոգրաֆիայի հիմնական սկզբունքներին: Ո՛չ դերասանական հիանալի խաղը, ո՛չ ռեժիսորական ու օպերատորական աշխատանքը չէին կարողացել ծածկել եղած թերությունները: Ֆիլմի երաժշտությունը չէր դարձել գործողության ակտիվ մասնակիցը, հատկապես մարտի տեսարաններում երաժշտությունը ակնհայտ անհաջող էր, բայց միևնույն ժամանակ հուզական վիճակը արտահայտելիս, ֆիլմի երաժշտությունը դարձել է շատ տպավորիչ (Միկոյան 1958, 155–156):

Այնուամենայնիվ, ֆիլմը հաջողվել էր, քանի որ մեծամասամբ հաղթահարվեցին բոլոր դժվարությունները և նկարահանվեց պատմական լավագույն ֆիլմը: Այդ ամենի արտահայտումը եղել է Հ.Բեկնազարյանի խոստովանությունը, թե իրեն հպարտության զգացումով է համակում հենց միայն այն իրողությունը, որ ինքը պատերազմի շրջանում ժողովրդին պիտանի ֆիլմ էր նկարահանել: Անտարակույս, հաջողված շատ ու շատ բան կար այդ ֆիլմում, – հավաստել է Հ.Բեկնազարյանը: «Ոչ առանց հպարտության կարող եմ ասել, որ «Դավիթ Բեկի» մի շարք կոմպոզիցիաներ հիմք ծառայեցին ուրիշ ռեժիսորների աշխատանքների համար՝ պատմական նկարներ բեմադրելիս...» (Քալանթար 1986, 257–258): Ու ևս մի հետաքրքիր խոստովանություն. «Եթե ինձ հարկ լիներ նորից էկրանավորել Սունդուկյանի պիեսներից մեկը, ես չէի կարողանա ոճական տեսակետից հասնել այլ բանի, քան կրկնել «Պեպոն»: Իսկ եթե ինձ հարկ լիներ մի անգամ էլ էպիկական ծավալուն սյուժե ունեցող պատմական ֆիլմ բեմադրել, ես «Դավիթ Բեկը» չէի կրկնի: Որքան էլ այդ ֆիլմը թանկ է ինձ համար, այն կլիներ ավելի նշանակալի, ավելի մասշտաբային պատմական կտավ ստեղծելու լոկ առաջին աստիճանը» (Բեկնազարյան 1968, 277): «Դավիթ Բեկ» ֆիլմը մեծարժեք նկար է. «Մեր արվեստի խոշոր ու անվիճելի նվաճումներից մեկը» (Սարյան 1944, 110): Ահա այս իմաստով «Դավիթ Բեկ» ֆիլմը նշանակալից երևույթ է Երևանի կինոստուդիայի ստեղծագործական կյանքում և նրա առջև բացում է գեղարվեստական նոր ու ընդարձակ կտավների ստեղծման լայն հեռանկարներ (Սարյան 1944, 109):

Հաջորդ ֆիլմի ստեղծումը համընկավ այն իրադարձության հետ, երբ 1978 թ. ՀԽՍՀ-ում նշվում էր Հայաստանի՝ Ռուսաստանին վերամիավորվելու 150-ամյակը և հենց այդ միջոցառումների շրջանակներում էլ նկարահանվեց ու ցուցադրվեց Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպի մոտիվներով «Հուսո աստղ» գեղարվեստական կինոնկարը, որը «Հայֆիլմ» և «Մոսֆիլմ» կինոստուդիաների («Էկրան» 1979, 1) համատեղ արտադրանքն էր: Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի առաջնորդությամբ Սյունիքում հայ ժողովրդի 18-րդ դարի 20-ական թվականների ազգային-ազատագրական պայքարին նվիրված պատմա-ռոմանտիկ այս կինովեպը ռեժիսոր Էդմոնդ Քեռսայանի[5] բեմադրություններից է: Ֆիլմը բաղ-

5 Կինոռեժիսոր Էդմոնդ Քեռսայանը (1936–1994) աշխատել է «Մոսֆիլմ» և «Հայֆիլմ»

կացած էր երկու մասից՝ «Դավիթ Բեկ» և «Մխիթար Սպարապետ»: Դերերում հանդես են եկել վրաց դերասան Էդիշեր Մաղալաշվիլին (Դավիթ Բեկ), ով 1979 թ. այդ դերի համար արժանացել էր Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման, Արմեն Ջիգարխանյան (Մխիթար Սպարապետ), (ՄեդիաՄաքս 2021), Խորեն Աբրահամյան (Տեր Ավետիս), Սոս Սարգսյան (Մովսես), Լաուրա Գևորգյան (Սաթենիկ), Ալլա Թումանյան (Գոհար) և այլք («Ֆիլմ» 1978):

«Հայֆիլմ» ստուդիայում երկար տարիներ փորձ չէր արվել ստեղծել լայնամասշտաբ կինոնկար: Խնդիրը միայն այն չէր, որ ստուդիան տեխնիկապես զինված չէր և չէր կարող հաղթահարել ֆիլմի ստեղծման դժվարությունները, այլ այն, թե ո՞վ էր լինելու այն ռեժիսորը, որ կստանձներ այդ գործը: Աշխարհին «Անորսալիները» բազմասերիանոց ֆիլմով հայտնի ռեժիսոր Էդմոնդ Քեռսայանը ստանձնեց այդ գործը: Նա ուներ փայլուն ստեղծագործական և կազմակերպչական տաղանդ (Հայրյան 1979, 218): «Լքված հեքիաթների կիրճը» ֆիլմի նկարահանման ժամանակ Տաթևի կիրճում Քեռսայանին հարց են ուղղել, թե արդյոք նա ճանաչո՞ւմ էր Սերո Խանզադյանին, նա պատասխանել էր, դա ինչ հարց է, ո՞վ չի ճանաչում, մի քանի օր առաջ եմ ավարտել «Մխիթար Սպարապետ» վեպի ընթերցանությունը: Նայելով այս լեռներին, անտառներին ես չեմ կարողանում ստույգ որոշել, սրանք այստե՞ղ են ավելի գեղեցիկ, թե վեպում: Հենց այս զրույցի ժամանակ էլ ծագել էր պատմավեպը կինոնկար դարձնելու գաղափարը (Հայրյան 1979, 218–219):

Մի հետաքրքիր տեղեկություն կա կապված Է.Քեռսայանի հետ: Ռեժիսորը իր անսահման էներգիայով հանդերձ չափազանց լուրջ էր վերաբերվում աշխատանքին: «Հուսո աստղի» նկարահանումներին նախապատրաստվելիս նա ուսումնասիրում էր պատմական նյութը: Է.Քեռսայանը հայերեն ընդհանրապես չէր խոսում և չէր կարդում, դրա համար ստիպում էր կնոջը բարձրաձայն ու դանդաղ ընթերցել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որ հասցնի ընկալել ու մարսել: Նկարահանումների ընթացքում նա միշտ փոխում էր սցենարը, բայց այնուամենայնիվ իր բոլոր սցենարները նա անգիր գիտեր և անձամբ բոլոր դերերը ցույց էր տալիս՝ խաղալով դերասանների համար: Քեռսայանը «այն արվեստագետներից էր, որ դեռ աշխատանքը չսկսած շատ լավ գիտեր, թե ինչպիսին էր լինելու արդյունքը» («Էկրան» 1977, 4):

Նա երբեք նկարահանման չէր գալիս անպատրաստ: Միշտ գիտեր ինչ և ինչպես պետք է նկարահանի: Շատ խիստ էր, և բացարձակ լռություն պիտի լիներ նկարահանման ժամանակ, իսկ այնտեղ հարյուրավոր, անգամ հազարավոր մարդիկ էին ներկա լինում: Գառնիում «Հուսո աստղի» զանգվածային տեսարաններից մեկի նկարահանման համար, երբ Մխիթարը հայտարարվում էր Դավիթ Բեկի հետնորդը, աստիճաններին ու վանքի շուրջը, բլրի լանջին հսկայական բազմություն է հավաքված եղել: Հանկարծ քար լռության մեջ հնչել է Է.Քեռսայանի ձայնը, հայհոյանքների տարափ, այնուհետև «Հանի՛ր ձեռքիդ ժամացույցը...»: Միջնադարում ձեռքի ժամացույցներ գոյություն չունեին... Աներևակայելի էր թե ինչպես էր նա բազմության մեջ նման հեռավորությունից կարողացել տեսնել այդ

կինոստուդիաներում: Համարվել է խորհրդային կինոյի արկածային ժանրի լավագույն վարպետներից մեկը:

ժամացույցը: Նրա ֆիլմերի գլխավոր առանձնահատկությունը բարությունն էր: Հայերի ազատագրական պայքարի մասին պատմող «Հուսո աստղ» ֆիլմում նա փորձում էր խուսափել ավելորդ դաժանությունից ու արյունից (Այանյան 2013):

Ֆիլմ ստեղծելու կարևոր նախապայմանը սցենար գրելն էր, ինչից Ս.Խանզադյանը հրաժարվեց և Է.Քեռսայանը մատնանշեց Կոնստանտին Իսաևին, ով և մեծ ուրախությամբ համաձայնեց և մեկ տարում վերջացրեց սցենարը: Այն գրվել էր այնպիսի բարձր մակարդակով, որ «Հայֆիլմ»-ում բոլորին դուր եկավ: Ֆիլմ ստեղծելու համար անհրաժեշտ էր տեխնիկապես հարուստ կինոստուդիա, նկարահանման աշխատանքները իրականացնելու համար: «Հայֆիլմ» կինոստուդիան չունենալով այդ միջոցները դիմեց ավելի հզոր «Մոսֆիլմ» ստուդիայի օգնությանը, որը սիրով ընդունեց համատեղ աշխատելու առաջարկը: Այս ամենին հաջորդեց ԽՍՀՄ պետկինոյի նախագահի հրամանը, որի մեջ ասված էր. «1.Թույլ տալ «Մոսֆիլմ» և «Հայֆիլմ» կինոստուդիաներին պետական պատվերի պայմաններով իրականացնել լիամետրաժ «Հուսո աստղ» ֆիլմի համատեղ բեմադրությունը: 2. Լիամետրաժ գունավոր լայնֆորմատ «Հուսո աստղ» նկարը, որը բաղկացած է երկու ֆիլմերից, մտցնել «Մոսֆիլմ» և «Հայֆիլմ» կինոստուդիաների 1978 թ. թեմատիկ պլանի մեջ: Աշխատանքը կատարել պետական պատվերով լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր ստեղծելու մասին եղած ժամանակավոր հրահանգի հիման վրա» (Հայրյան 1979, 219–220):

Հետագայում պարզ է դարձել, որ նման ֆիլմի ստեղծումը դժվար էր նաև երկու ստուդիաների համար: Այս խնդրի լրջությունը հասկանալով՝ Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը որոշում ընդունեց, որի հիման վրա մինիստրների խորհուրդը հատուկ հրահանգով պարտավորեցրեց մինիստրություններին, գերատեսչություններին ու կազմակերպություններին, ամեն կերպ օգնել «Հուսո աստղ» ֆիլմի նկարահանման աշխատանքներին: Ժամանակի հետ նկատելի էր, թե ինչպիսի ջանք ու եռանդ, միջոցներ են ներդրվում, որպեսզի անխափան ընթանան ֆիլմի աշխատանքները: Ֆիլմում դերասանների համար առաջին լուրջ հանձնարարականներից էր ձի հեծնելու հարցը: Է.Քեռսայանը նրանց նկարահանումներից դեռ մեկ տարի առաջ ուղարկել էր ձիարշավարաններ, որպեսզի նրանք մարզվեն և պատրաստվեն: Առհասարակ, ֆիլմում նկարահանելու համար շատ ձիեր էին պետք, որոնք բերվել էին Հայաստանի կոլտնտեսություններից և հովիվներից (Այսօր 2014): Ֆիլմի նկարահանումների հետ կապված կա մի հետաքրքիր, քիչ հայտնի, միաժամանակ և՛ զավեշտալի, և՛ զարմանալի պատմություն, որի մասին Արարատում շատերը գիտեն. «Ֆիլմի որոշ տեսարաններ նկարահանվել էին Խոր Վիրապի բլուրների մոտ, որտեղ մոտակա գյուղերի գերեզմանատունն էր, նկարահանման ժամանակ, երբ հեծելազորը սրերով անցնելիս է եղել, այստեղ իրականում թաղման արարողություն էր ընթանում, և թաղման թափորից ոմանք, տեսնելով սրերով դերասաններին, կարծել են, թե տեսարանն իրական է, և իրենց վրա հարձակվողը թշնամին է, թողել ու փախչել են այնտեղից» (Այսօր 2014): «Հուսո աստղ» ֆիլմը դարձավ հայ և ռուս կինոաշխատողների հիանալի նվերը Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտցնելու 150-րդ տարեդարձին, այն երկու ժողովուրդների բարեկամության և համագործակցության վառ օրինակն էր (Հայրյան 1979, 221):

«Հուսո աստղ» ֆիլմի պաշտոնական շնորհանդեսը տեղի է ունեցել Երևանի «Ռոսիա» կինոթատրոնում 1978 թ. հոկտեմբերի 15-ին: Ֆիլմը լայն արձագանք է գտել հանրության կողմից (Այսօր 2014): Հետագայում պարզ է դարձել, որ Երևանում կայացած ցուցադրությունը ամենևին էլ առաջինը չէր: «Հուսո աստղ»-ի իրական պրեմիերան տեղի է ունեցել դրանից օրեր առաջ՝ Վեդիի կինոթատրոնում: Հետաքրքիրն այն էր, որ Վեդի քաղաքին էր տրվել նման արտոնություն, քանի որ ֆիլմի նկարահանումները հիմնականում տեղի էին ունեցել Արարատի շրջանում՝ Խոր Վիրապում, Ջանգակատուն տանող լեռներում և այլ վայրերում: Շրջանի բնակչությունն էլ անմասն չի մնացել և աջակցել էր նկարահանող խմբին. նախ՝ մասնակցությունն էր ցուցաբերել մասսայական տեսարաններում, և հետո՝ իրենց բերքն ու բարիքն արկղերով հասցրել էր նկարահանման հրապարակ, կերակրել և աջակցել խմբին: Է. Քեռոսյանը, որպես երախտագիտության նշան, ֆիլմի առաջին ցուցադրությունը կազմակերպել է հենց արարատցիների համար (Այսօր 2014): Գրականագետ Հովիկ Զարխչյանը պատմել է, որ Վեդիի կինոդահլիճում ասեղ գցելու տեղ չի եղել. «Ինքս էլ եղել եմ առաջին այդ ցուցադրությանը, շատ լավ հիշում եմ, թե դահլիճը որքան լեփ-լեցուն էր այդ օրը: Սկզբում մեզ պատմեցին նկարահանման ընթացքում առաջ եկած խոչընդոտների մասին, ապա ցուցադրվեց ֆիլմը, որից հետո ողջ դահլիճը հուզվեց, մարդիկ հոտնկայս ծափահարում էին, այնտեղ էին դերասանները, ռեժիսորն ու տեխնիկական անձնակազմը» (Այսօր 2014): 1978 թ. հոկտեմբերին Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի օրերին Մոսկվայում հանդիպումներ էին տեղի ունեցել երկու եղբայրական ժողովուրդների գրականության և կինոյի գործիչների միջև: Այդ հանդիպման ժամանակ կինեմատոգրաֆիստները քննարկել են առկա խնդիրները և դիտել են երկսերիանոց՝ «Հուսո աստղ» ֆիլմը («Հայրենիքի ձայն» 1978, 1): Մայրաքաղաքի էկրաններին հաջողությամբ ցուցադրվում է ֆիլմը: Կինոնկարի ստեղծագործական անձնակազմը հանդիսատեսի հետ ունեցել է մի շարք հանդիպումներ Երևանի «Ռոսիա», «Մոսկվա», «Արագած» կինոթատրոններում, ինչպես նաև Կինոյի տանը («Ֆիլմ» 1978):

Չնայած նրան, որ հանդիսատեսը սիրեց ֆիլմը, այնուամենայնիվ հասարակության շրջանում քննարկումների առիթ դարձավ ֆիլմում պատմական փաստերի որոշակի անճշտություն, օրինակ՝ ռուսների գալուն վերաբերող տեսարանները. բանն այն է, որ նրանք ավելի ուշ են Հայաստան հասել, քան նկարագրվել էր (Այսօր 2014):

Արվեստի գործիչները ևս հայտնել են իրենց կարծիքները ֆիլմի վերաբերյալ: «Ֆիլմ» թերթում կարդում ենք Սերո Խանզադյանի կարծիքը ֆիլմի մասին: Նա ասում էր. «Ես ութ տարի հրաժեշտ էի տվել վեպին ու կերպարներին, և ահա մի օր նրանք նորից եկան իմ տուն, նրանց բերել էր Էդմոնդ Քեռոսյանը: Նա ասաց՝ ես կամենում եմ քո կերպարներին բարձրացնել մեծ էկրան, ի՞նչ կասես: Բնականաբար ոչինչ չէի կարող ասել մարդու, ով կինոյի ասպարեզում մեծ հեղինակություն էր ձեռք բերել, և հետաքրքիր կլիներ նայել այլ տեսանկյունից իմ կերպարներին: Եվ ես հետո էկրանին տեսա այդ կերպարների կենդանացած ուժը: Կինոն իր ամբողջության մեջ համապատասխանում էր իմ վեպի հոգեբանությանը» («Ֆիլմ» 1978):

Ֆիլմի բեմադրող նկարիչ Ստեփան Անդրանիկյանը «Հուսո աստղ» ֆիլմում աշխատելու առաջարկությունը ստացել է անսպասելի, քանի որ չէր մասնակցել

նախապատրաստական շրջանին, և մի փոքր դժվարությամբ, բայց համաձայնել էր, և տեսնելով Քեռոսյանի ոգևորությունը, արագ լծվել էր աշխատանքին: Անհրաժեշտ էր կարճ ժամանակում կատարել մի շարք աշխատանքներ՝ էսքիզներ, գծանկարներ, նկարահանման վայրերի ընտրություն: Ըստ մտահղացման՝ պետք էր «Մոսֆիլմում» նկարահանեինք 10–12 դեկորացիա, ինչը և մեծ ծախսեր և ժամանակ էր պահանջում: Առաջարկվեց որոշ դրվագներ նկարահանել մեր պատմական հուշարձաններում, եկեղեցիներում, որը և տվեց դրական արդյունք: Ֆիլմը պատմականորեն ստացավ ճշմարտացի միջավայր և ձեռք բերեց անհրաժեշտ հայկական ոգու մթնոլորտը: Կատարվող աշխատանքի ղեկավարը, ոգևորողը հենց ինքը՝ Է.Քեռոսյանն էր, ով իր անսպառ հնարավորություններով, կարողացավ պահպանել նկարահանող խմբի եռանդը: Այս ծանր, բայց և նվիրումով կատարած աշխատանքը հանդիսատեսի ջերմ վերաբերմունքով փոխհատուցվեց: Է.Քեռոսյանը, խոսելով ֆիլմի մասին, ասել է. «Ֆիլմը հարգանքի տուրք է այն հարյուր հազարավոր անմեղ զոհերին, որոնք մարտնչել են հայ ժողովրդի, ազգի գոյատևման համար» («Ֆիլմ» 1978):

Քանի որ ֆիլմը հանրության կողմից մեծ ոգևորությամբ ընդունվեց, կինոթատրոնում սեանսներից հետո «Ֆիլմ» թերթի աշխատակիցներից մեկը սկսեց գրի առնել տարբեր տարիքի և մասնագիտությունների տեր հանդիսատեսների՝ կինոնկարից ստացած առաջին տպավորությունները: Ժողտնտեսության ինստիտուտի ուսանողուհիներ՝ Արևիկ Հարությունյանը և Արծվիկ Դավթյանը «Հուսո աստղ» ֆիլմը դիտելուց հետո համոզված դուրս եկան դահլիճից, որ ֆիլմը անտարբեր հանդիսատես չի ունենա: Կինոնկարը պատկերել է հայ ժողովրդի ողբերգական, միևնույն ժամանակ հերոսական կյանքի ամենաճակատագրական պահերից մեկը: Ֆիլմը հուզում է իր ճշմարտացիությամբ, պատմական դեմքերի ու դեպքերի պատկերմամբ, կինեմատոգրաֆիկական արտահայտչամիջոցների բազմազանությամբ, ռեժիսորական հետաքրքիր լուծումներով, դերասանական ուշագրավ անսամբլով: Հատկապես տպավորել է Է.Մաղալաշվիլու կերտած Դավիթ Բեկը: 27-ամյա Ռուբեն Նահատակյանի կարծիքով (Պետական կենտրոնական պատմության արխիվի գիտաշխատող), ֆիլմը ռեժիսոր Է.Քեռոսյանի լավագույն նվաճումն էր, կինեմատոգրաֆիկական ազդեցիկ լեզվով հանդիսատեսին ներկայացվել է Սյունիքի պատմության հերոսական էջից մեկը: Երիտասարդը Դավիթ Բեկին պատկերացրել է այնպես, ինչպես խաղում էր Է.Մաղալաշվիլին: Հաջողված էին ռազմի տեսարանները, և տպավորիչ էր հատկապես ֆիլմի երաժշտությունը (կոմպոզիտոր՝ Է.Հովհաննիսյան): Նույն արխիվի մեկ այլ աշխատող 27-ամյա Գայանե Գրիգորյանի կարծիքով Է.Քեռոսյանին հաջողվել է հայ ժողովրդի պատմության դրամատիկ դեպքերը էկրանավորել և հանդիսատեսին ստիպել սրտի թրթիռով հետևելու պատմական ծանոթ անցքերին: Ցանկացած ֆիլմի ցուցադրությունից առաջ հանդիսատեսը ունենում է իր կանխակալ կարծիքը, յուրաքանչյուր կերպարի, տեսարանի վերաբերյալ իր պատկերացումը, և միշտ չէ, որ հանդիսատեսը գոհանում է: Ըստ նրա՝ «Հուսո աստղը» գոհացնում է կինոդիտողին: Է.Մաղալաշվիլու Դավիթ Բեկը խոր ակնածանք և համակրանք է ներշնչում: Ընդհանրապես ֆիլմի կերպարները՝ մեծ թե փոքր, կերտված են մեծ վարպետությամբ և հատկապես գովեստի է արժանի օպերատորական աշխատանքը

(«Ֆիլմ» 1978): Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Էլդա Մալխասյանը, խոսելով «Հուսո աստղ» ֆիլմի կարևորության մասին, շեշտել է նրա անգնահատելի ստեղծագործություն լինելը («Ֆիլմ» 1978):

«Հուսո աստղ» ֆիլմը ցույց է տվել, որ լավ կինոնկարի գլխավոր պայմանը լավ գրական հիմքն է: Սցենարիստը կարողացել էր վեպից վերցնել այն, ինչ կարևոր էր ֆիլմ ստեղծելու համար: Ֆիլմում Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի և մյուս դերասանների խաղից զգացվում էր հայրենասիրության ոգին: Նրանք իրենց խաղով հիանալի տպավորություն էին թողնում հանդիսատեսի վրա: Ֆիլմի հերոսները հոգեբանական ամուր փոխհարաբերությունների մեջ էին միմյանց հետ և ամենակարևորը իրենց խաղով ցույց էին տալիս հայրենիքի հետագա լավ ապագայի հանդեպ իրենց հավատով լեցուն լինելը (Հայրյան 1979, 223–224):

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք ասել, որ մեր կինոռեժիսորները և դերասանները կարողացել են այնպիսի ֆիլմեր ստեղծել, որոնք ցույց են տալիս հայրենիքի հանդեպ անսահման սերը, նվիրումը, հերոսական ոգին և միասնությունը: Շատ կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ առաջնորդի՝ Դավիթ Բեկի, շուրջ համախմբվելով՝ տղամարդիկ, կանայք, ինչպես նաև հոգոր դասը, հավատում էին, որ սեփական ուժին ապավինելով պետք է պայքարել և ազատագրել հայրենի հողը: Սա հաղթական անցյալի ներկայացում էր, որով հայ ժողովրդին հպարտության զգացում էր համակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարբերական մամուլ

«ԷԿՐԱՆ» 1977 – «Էկրան» ամսագիր, Երևան, 1977, հոկտեմբեր, N 10:

«ԷԿՐԱՆ» 1979 – «Էկրան» ամսագիր, Երևան, 1979, հունվար, N 1:

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ» 1978 – «Հայրենիքի ձայն» թերթ, Երևան, 1978, հոկտեմբերի 25, N 43:

«ՖԻԼՄ» 1978 – «Ֆիլմ» թերթ, Երևան, 1978, հոկտեմբերի 31, N 30:

Էլեկտրոնային սկզբնաղբյուրներ

ԱՅԱՆՅԱՆ 2013 – Այանյան Է., Հարազատ օտարը, Թինա Քեռոսյանի անձնական արխիվից (https://imyerevan.com/hy/society/view/2255):

ԱՅՍՕՐ 2014 – Այսօր, Մեր կինոն. Մխիթար Սպարապետի անսովոր կերպարն ու Ջիգարխանյանի ջանքերը (https://www.aysor.am/am/news/2014/04/14/mkhitar-sparapet-film/774715):

ԴԱՎԹՅԱՆ 2020 – Դավթյան Թ., «Դավիթ Բեկ» և «Մխիթար Սպարապետ» պատմավավերագրական ֆիլմեր: Կերպարների վերլուծություն (https://davtyantamarablog.home.blog/2020/10/02/%D5%A4%D5%A1%D5%BE%D5%AB%D5%A9-%D5%A2%D5%A5%D5%AF-%D6%87-%D5%B4%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80-%D5%BD%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1/):

ՄԵԴԻԱՄԱՔՍ 2021 – Մեդիամաքս «Դավիթ Բեկ»-ն ու «Մխիթար Սպարապետ»-ը, (https://sovietarmenia.mediamax.am/story/19):

Գրականություն

ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ 1968 – Բեկնազարյան Հ., Հուշեր դերասանի և կինոռեժիսորի, Երևան, 1968:

ԳԱԼՍՏՅԱՆ 2022 – Գալստյան Ս., «Սյունյաց երկիր. Մշակութային», Կապան, 2022, հունիսի 20, N 6, էջ 33–35:

ՀԱՅՐՅԱՆ 1979–Հայրյան Գ, Սերո Խանզադյան, Երևան, 1979:

ՄԻԿՈՅԱՆ 1958–Միկոյան Ն, Հայկական ֆիլմերի երաժշտությունը, «Հայկական կերպարվեստը» հոդվածների ժողովածու, Երևան, 1958, էջ 158:

ՌԻԶԱԵՎ 1958–Ռիզան Ս, Հայ թատրոնը և կինոն, «Հայկական կերպարվեստը». հոդվածների ժողովածու, Երևան, 1958, էջ 127:

ՍԱՐՅԱՆ 1944–Սարյան Գ, «Դավիթ Բեկ», «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1944, N 2–3, էջ 109:

ՔԱԼԱՆԹԱՐ 1986–Քալանթար Կ, Համո Բեկնազարյան, Երևան, 1986:

Armine Shahbazyan
Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of Liberation Struggle
shahbazyan9494@gmail.com

LIBERATION STRUGGLE OF SYUNIK LED BY DAVID BEK PRESENTED IN THE ARMENIAN CINEMA

Keywords: Cinema, Amo Beknazaryan, "David Bek", Edmond Keosayan, "Armenfilm", "Mosfilm", "Hope Star".

The objectives of this article are to present the creative and organizational work carried out by directors, creative team and actors during the filming of "David Bek" and "Hope Star", the difficulties encountered and their overcoming.

The aim of the article is to analyze the collected materials, present the history of the creation of films and emphasize their historical significance in the life of the Armenian people. Both films were shot under the influence of different events and showed that if the goal was to turn to the heroic past of one's own people, no obstacles could interfere. These films once again reminded people that we had a victorious past and we must remember our heroes. The patriotic image of David Bek is of great value in shaping the patriotic views of generations.

Армине Шахбазян
Мемориальный комплекс Сардарапатской битвы, национальный музей этнографии армян и истории освободительной борьбы
shahbazyan9494@gmail.com

ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА СЮНИКА ВО ГЛАВЕ С ДАВИТОМ БЕКОМ, ПРЕДСТАВЛЕННАЯ В АРМЯНСКОМ КИНОИСКУССТВЕ

Ключевые слова: Кино, Амо Бекназарян, "Давит Бек", Эдмонд Кеосаян, "Арменфильм", "Мосфильм", "Звезда надежды".

Задачи данной статьи–представить творческую и организационную работу, проделанную режиссерами, творческими группами и актерами во время съемок фильмов “Давит Бек” и “Звезда надежды", возникшие трудности и их преодоление.

Цель статьи–проанализировав собранные материалы, представить историю создания фильмов и подчеркнуть их историческое значение в жизни армянского народа. Оба фильма были сняты под влиянием разных событий и показали, что если ставится цель обратиться к героическому прошлому собственного народа, то никакие препятствия не могут помешать. Эти фильмы еще раз напомнили публике, что у нас было победоносное прошлое, и мы должны помнить наших героев. Образ Давита Бека своим патриотизмом имеет большую ценность в формировании патриотических взглядов поколений.